


«Հաստատում եմ»



2018թ.

«ԳՈՐԾԻՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ»

ԳՈՐԾԻՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐԱՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻԴ

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 4

Գորիս 2018

Բովանդակություն

1. Չափանիշ 1. Առաքելությունը և նպատակները -----	3
2. Չափանիշ 2. Կառավարում և վարչարարություն -----	9
3. Չափանիշ 3. Մասնագիտական կրթական ծրագրեր -----	16
4. Չափանիշ 4. Ուսանողներ -----	23
5. Չափանիշ 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ -----	27
6. Չափանիշ 6. Հետազոտությունը և զարգացումը -----	31
7. Չափանիշ 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ -----	40
8. Չափանիշ 8. Հասարակական պատասխանատվություն -----	46
9. Չափանիշ 9. Արտաքին կապերը և միջազգայնացումը -----	52
10. Չափանիշ 10. Որակի ներքին ապահովման համակարգ -----	62
11. Օգտագործված հապավումներ -----	69

ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

<p>ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ</p> <p>ԳՊՀ 2011-2016թթ. Հայեցակարգում (ռազմավարական ծրագիր) ձևակերպված են ԳՊՀ-ի առաքելությունն ու նպատակները, որոնք հիմնականում արտացոլում են համալսարանի ծավալած գործունեությունը, սակայն համալսարանում իրականացված չէ 2011-2016 թթ. հայեցակարգի արդյունավետության գնահատում և վերլուծություն: ՌԾ-ի իրականացման ըստ տարիների ժամանակացույցի բացակայությունը բուհին հնարավորություն չի ընձեռում գնահատելու և վերլուծելու նպատակների և գործողությունների իրականացման ընթացիկ արդյունավետությունը:</p>	<p>ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ</p> <p>Կարևորելով փորձագիտական խմբի տված խորհրդատվությունները, նոր ռազմավարական ծրագիրը մշակելիս կներդրվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կարտացոլեն շրջանավարտների և գործատուների կարծիքը, ինչպես նաև կիրականացվեն ՊԴԱ-ի հետ քննարկումներ, որոնց արդյունքում կրթական ծրագրերը հնարավորինս կհամապատասխանեցվեն աշխատաշուկայի պահանջներին, կվերանայվեն նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքները:</p>
--	---

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիվ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
1.Վերանայել և հստակեցնել համալսարանի առաքելությունը և ռազմավարական նպատակները՝ սահմանելով առավել իրատեսական, չափելի ու համալսարանի շահակիցների հետ համաձայնեցված և նրանց համար ընկալելի	Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների վերանայման նպատակով ձևավորել աշխատանքային խումբ որը կիրականացնի քննարկումներ համալսարանի շահակիցների հետ ԳՊՀ առաքելության և	<i>Իրականացման փուլում է</i>	Համալսարանի նոր ռազմավարության մշակման Համար ձևավորված աշխատանքային խումբ, արտաքին և ներքին շահակիցներ:	Հստակ սահմանված առաքելություն և ռազմավարական նպատակներ, որոնք կլինեն ավելի իրատեսական:	ԿԽ, ԳԽ, Ռեկտորատ:	2018թ.-ի առաջին կիսամյակ	Արտաքին և ներքին շահակիցների կողմից վերանայված առաքելության և ռազմավարական նպատակների վերաբերյալ քննարկումների արձանագրություններ:

<p>հավակնություններ՝ գլխավորապես շեշտադրելով ԳՊՀ-ի կարևոր դերը տարածաշրջանի համար:</p>	<p>ռազմավարական նպատակների վերանայման և դրանք առավել իրատեսական ու չափելի դարձնելու նպատակով :</p>						
<p>2. Օգտագործել ներկայիս անցումային շրջանը՝ ԳՊՀ-ի ռազմավարական դիրքորոշման վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների հետ խորքային քննարկումների ու վերլուծությունների իրականացման համար, որոնք բովանդակային հենք կհանդիսանան բուհի ապագա ռազմավարության մշակման համար:</p>	<p>1. Քննարկումների կազմակերպում արտաքին և ներքին շահակիցների հետ ԳՊՀ-ի ռազմավարական դիրքորոշման հստակեցման նպատակով:</p>	<p>ԳՊՀ-ն գտնվում է կազմակերպչական կարգավիճակի փոփոխության <i>անցումային փուլում:</i></p>	<p>2018-2023 թթ ՌԾ մշակման աշխատանքային խումբ, արտաքին և ներքին շահակիցներ:</p>	<p>ԳՊՀ ռազմավարական դիրքորոշման հստակեցում նոր ռազմավարական նպատակների սահմանում:</p>	<p>ԳՊՀ ռեկտոր, ԳԽ, ռեկտորատ:</p>	<p>2018թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներ:</p>	<p>ՌԾ մշակման աշխատանքային խմբի և համալսարանի շահակիցների հանդիպումների ժամանակ կայացած քննարկումների արձանագրություններ, արդյունքների վերլուծություններ:</p>

3.Մշակել ՌԾ՝ թիրախավորելով ռազմավարական ուղղություններն ու գերակայությունները և սահմանելով ծրագրի իրականացման հստակ ժամանակացույց:	1.ՌԾ մշակման աշխատանքային խմբի կողմից նոր ռազմավարության մշակման նպատակով աշխատանքների իրականացման պլանավորում:	<i>Իրականացման փուլում է</i>	2018-2023 թթ. ՌԾ աշխատանքային խումբ, ԳԽ:	1.ՌԾ – ի մշակման աշխատանքային պլան:	Ռեկտոր, 2018-2023 թթ. ՌԾ մշակման աշխատանքային խումբ:	2018թ.-ի կիսամյակ	երկրորդ	1. Աշխատանքների իրականացման ժամանակացույց , արձանագրություններ:
	2.Նոր ռազմավարության մշակում:			2. 2018-2023 թթ. ՌԾ:				2.ԳՊՀ-ը խորհրդում նոր ՌԾ վերաբերյալ դրական եզրակացություն և 2018-23 թթ ՌԾ – ի հաստատում:
4.Ընդլայնել շահակիցների (հատկապես արտաքին շահակիցների) ընդգրկվածության շրջանակը համալսարանի ՌԾ մշակման,	Կազմակերպել հանդիպումներ , կլոր սեղաններ շահակիցների հետ ավելի արդյունավետ քննարկումների կազմակերպման նպատակով :	Պլանավորման փուլում է:	2018-2023 թթ. ՌԾ աշխատանքային խումբ, ներքին և արտաքին շահակիցներ:	Արդյունավետ համագործակցության համար բարենպաստ պայմանների առկայություն:	2018-2023 թթ. ՌԾ մշակման աշխատանքային խումբ:	2018թ.-ի կիսամյակ:	երկրորդ	Արտաքին և ներքին շահակիցների շրջանակներում իրականացված հարցումների վերլուծության արդյունքներ:

<p>իրականացման և գնահատման գործընթացներում՝ կիրառելով և պարբերաբար վերլուծելով շահակիցների ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:</p>							
<p>5.Մշակել կարճաժամկետ ու միջնաժամկետ գործողությունների ծրագրեր և դրանց իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ՝ համալսարանի ՌԾ սահմանված նպատակների իրականացումն ապահովելու համար:</p>	<p>1.Նոր ՌԾ նպատակների իրականացումը ապահովելու նպատակով կառուցվածքային ստորաբաժանումներում մշակել միջնաժամկետ ՌԾ-եր:</p>	<p>Պլանավորման փուլում է:</p>	<p>Կառուցվածքային ստորաբաժանումներ :</p>	<p>1.Կառուցվածքային ստորաբաժանումների ՌԾ-եր:</p>	<p>ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների ղեկավարներ:</p>	<p>1.Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2019թ. ուս. տարի, 2.Մեկնարկ՝ 2019թ., ավարտ՝ 2020թ. ուս. տարի</p>	<p>Կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվություններ (ներառյալ SWOT վերլուծությունը):</p>
				<p>2.Գործողությունների իրականացման կարճաժամկետ ծրագրեր:</p>			

<p>6.Ստեղծել ռազմավարության հարցերով զբաղվող խորհուրդ կամ հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ կատարելու համար:</p>	<p>Ստեղծել համալսարանի 2018-23 թթ. ՌԾ իրականացման և մոնիթորինգի հանձնաժողով:</p>	<p>Իրականացման փուլում է:</p>	<p>ԳԽ, 2018-23 թթ. ՌԾ մշակման աշխատանքային խումբ , Ֆակուլտետային խորհուրդներ, ԿՈԱ և ՌԻԿԱ բաժին:</p>	<p>Ռազմավարական նպատակների իրականացում:</p>	<p>Ռեկտոր, պրոռեկտոր, ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների ղեկավարներ:</p>	<p>ՌԾ-ի գործողության ողջ ընթացքում:</p>	<p>ՌԾ-ի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններ :</p>
<p>7.ԳՊՀ-ի ՌԾ-ի իրականացմանը համապատասխան եցնել բուհի ներքին քաղաքականությունները (օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման, որակի ապահովման և այլ ոլորտներում), որոնք նաև պետք է</p>	<p>Բուհի ՌԾ-ի իրականացումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով ուսումնասիրել համալսարանի ներքին քաղաքականությանը առանցվող կանոնակարգերը և ընթացակարգերը,</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>2018-2023 թթ. ՌԾ աշխատանքային խումբ, գիտական խորհրդին կից համապատասխան հանձնաժողով, ներքին և արտաքին շահառուներ:</p>	<p>ՌԾ-ի իրականացման համար անհրաժեշտ պայմանների առկայություն:</p>	<p>2018-2023 թթ. ՌԾ-ի իրականացման և մոնիթորինգի հանձնաժողով:</p>	<p>ՌԾ իրականացման ողջ ընթացքում:</p>	<p>Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվություններ (SWOT):</p>

<p>փոխկապակցված լինեն դրանց պրակտիկ իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների հետ:</p>	<p>կատարել համապատասխան առաջարկություններ դրանք վերանայելու, միմյանց հետ փոխկապակցելու և իրագործման համար առավել պրակտիկ դարձնելու համար:</p>						
---	---	--	--	--	--	--	--

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<p>ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ</p> <p>ԳՊՀ-ի կառավարման տարբեր մակարդակներում առկա որոշ խնդիրներ խոչընդոտում են կառավարման համակարգի թափանցիկության արդյունավետության գնահատմանը: Անհրաժեշտ է կանոնակարգել բոլոր ստորաբաժանումներում իրականացվող կառավարչական այն գործառույթները, որոնք թույլ կտան ամրապնդել կառավարման տարբեր օղակների միջև առկա կապերը:</p>	<p>ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ</p> <p>ԳՊՀ-ում ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում տեղի ունեցած փորձագիտական այցից հետո բուհի կառավարման համակարգի և վարչական կառույցների գործունեության արդյունավետության բարձրացումը համարվում է օրակարգային խնդիր: Կառավարման համակարգի ճկունության, ինչպես նաև արդյունավետությանն ուղղված գործողությունները կարտացոլվեն 2018-2023թթ. ՌԾ-ում:</p>
---	---

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
---------------	--------	----------------	---------	---------------	------------------	----------------	---------------------------------------

<p>8. Կազմակերպել վարչական աշխատակիցների համար վերապատրաստումներ՝ ուղղված այնպիսի հմտությունների զարգացմանը, որոնք կնպաստեն ինչպես արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ քաղաքականությունների ու ընթացակարգերի մշակմանն, այնպես էլ դրանց կիրառմանն ու շարունակական բարելավմանը:</p>	<p>Հստակեցնել վերապատրաստումների կարիք ունեցող ՊԴ և ՈԻՕ համակազմը, վերապատրաստող գործընկեր կազմակերպությունների և այլ կառույցների հետ վերապատրաստումների կազմակերպման ժամանակացույցերը:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ԱԿ բաժին: ՈԻՎ:</p>	<p>Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ կառավարման քաղաքականության և ընթացակարգերի, դրանց կիրառման և շարունակական զարգացման մեխանիզմների մշակում:</p>	<p>ՈԻՎ պետ, ԱԿ բաժնի ղեկավար :</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ.,</p>	<p>Վերապատրաստված և համապատասխան որակավորման հաստատված փաստաթղթերով աշխատակազմ:</p>
--	---	--------------------------------------	---------------------------	---	--	-------------------------	---

<p>9. Վերանայել համալսարանի կառավարման կառուցվածքն՝ ապահովելով ռազմավարական նպատակների ու կառավարման համակարգի համահունչությունը:</p>	<p>Վերլուծել ԳՊՀ-ի կառավարման կազմակերպական կառուցվածքը և գնահատել կառավարման արդյունավետությունը:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ԳԽ, ԱԿ բաժին:</p>	<p>Կազմակերպական կառուցվածքի վերլուծություններ: Կազմակերպական կառուցվածքի հաստատված սխեմատիկ պատկեր:</p>	<p>Ռեկտոր, ԱԿ բաժնի ղեկավար:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2019թ. ուս. տարի</p>	<p>ԳՊՀ հստակեցված կազմակերպական կառուցվածքի լրամշակված կանոնադրությունների առկայություն:</p>
<p>10. Հստակեցնել և համակարգել կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների գործառնությունների բաշխվածությունը և ապահովել վերջիններիս արդյունավետ փոխգործակցությունը /հորիզոնական կապերը/:</p>	<p>Ուսումնասիրել առաջատար բուհերի կառավարման համակարգը և վարչական կառույցները և վերափոխել ԳՊՀ կազմակերպչական կառուցվածքը և ստորաբաժանումների կանոնակարգերը:</p>	<p>Բոլոր ստորաբաժանումներն ունեն իրենց կանոնակարգերը, սակայն բացակայում են պաշտոնների գործառնությունների նկարագրերը և մյուս ստորաբաժանումների հետ փոխգործակցության եղանակները:</p>	<p>ԳԽ, ՌԻՎ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժին:</p>	<p>Բոլոր ստորաբաժանումների լրամշակված կանոնակարգեր և գործունեության արդյունավետության գնահատման կարգեր:</p>	<p>Ռեկտոր, ՌԻՎ պետ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի ղեկավար:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2019թ. ուս. տարի</p>	<p>Լրամշակված կանոնակարգերի առկայություն, փոխգործակցված կապերի առկայություն՝ ստորաբաժանումների միջև:</p>

<p>11.Ներդնել վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև ամբիոնային և ֆակուլտետային աշխատանքների լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմներ:</p>	<p>Ուսումնասիրել առաջատար բուհերի ամբիոնների և ֆակուլտետների աշխատանքները, կատարել համեմատական վերլուծություն:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ԳԽ, ՈԻՎ, ԱԿ բաժին:</p>	<p>Վարչական կառույցների, ամբիոնների և ֆակուլտետների գունդունեության արդյունավետության գնահատման կարգերի կազմում: Առաջատար բուհերի ամբիոնների և ֆակուլտետների աշխատանքների ուսումնասիրման համեմատական վերլուծության կազմում: Լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմների կազմում:</p>	<p>Ռեկտոր, ՈԻՎ պետ, ԱԿ բաժնի ղեկավար:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ. Դեկտեմբերից:</p>	<p>Լավագույն փորձի բացահայտման ու տարածման մեխանիզմների առկայություն:</p>
<p>12.Վերանայել կառավարման բոլոր մակարդակներում համալսարանի քաղաքականությունների ու ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման կառավարման մեխանիզմներ և</p>	<p>Կազմել կառավարման բոլոր մակարդակներում համալսարանի քաղաքականությունների ու ընթացակարգերի փաստաթուղթ՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով գործող մեխանիզմներ և</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>1.ԳԽ 2.ԿՈԱ և ՈԻԿԱ բաժին:</p>	<p>Որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով կազմված քաղաքականություններ և ընթացակարգեր: Որակի կառավարման սկզբունքով լրամշակված կանոնակարգեր:</p>	<p>1.Ռեկտոր, 2.ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի ղեկավար:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքով կազմված քաղաքականություններ ու ընթացակարգերի առկայություն: Որակի կառավարման սկզբունքով լրամշակված կանոնակարգերի առկայություն:</p>

<p>ՊԻԳԲ սկզբունքով գործող մեխանիզմներ և կանոնակարգեր:</p>	<p>կանոնակարգեր:</p>						
<p>13.Պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները, ներառյալ՝ վիճակագրական և այլ տվյալներ, կիրառել ուսումնասիրության չափելի գործիքներ:</p>	<p>Ընդլայնել և բարելավել համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրման և վերլուծության շրջանակը: Կիրառել ուսումնասիրման նոր գործիքներ:</p>	<p>Իրականացվում է որոշակի պարբերականությամբ: Ուսումնասիրման շրջանակի ընդլայնումը և նոր գործիքների ներդրումը. <i>սլանավորման փուլում է:</i></p>	<p>Իրականացվում է համալսարանի ներքին ռեսուրսներով, օգտագործվում է մարզային և համայնքային կրթության պատասխանատուների և գործատուների ներկայացրած տվյալները:</p>	<p>Առավել իրատեսական ռազմավարական ծրագրի կազմում, բյուջեի նախահաշվի կազմում, լրացուցիչ ռիսկերի բացառում:</p>	<p>Համալսարանի ներքին ռեսուրսներ, հաշվապահություն , մարզային կրթության պատասխանատուների, գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներ :</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2020թ. ուս. տարի</p>	<p>Բյուջեի նախահաշվի առկայություն: Արդյունավետ կառավարում:</p>
<p>14.Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների</p>	<p>Լրամշակել համալսարանի ԳԽ-ի, ԳԽ-ի, ֆակուլտետների խորհուրդների ձևավորման ընթացակարգերը՝ շահակիցների ներգրավման</p>	<p><i>Իրականացման փուլում է:</i></p>	<p>ԳԽ, ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոնների վարիչներ:</p>	<p>ԳՂՀ ԿԽ-ի, ԳԽ-ի, ֆակուլտետի լրամշակված կանոնակարգերի առկայություն՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավման ավելի արդյունավետ</p>	<p>Ռեկտոր, դեկաններ, մասնագիտական ամբիոնների վարիչներ:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2019թ. ուս. տարի</p>	<p>ԳՂՀ ԿԽ-ի, ԳԽ-ի, ֆակուլտետի, ամբիոնների և մնացած ստորաբաժանումների կանոնադրության լրամշակված կանոնակարգերի</p>

ներգրավման մեխանիզմները:	ավելի արդյունավետ մեխանիզմների ընդգրկումով:			մեխանիզմներով:			առկայություն, հստակեցված լինեն արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը:
15.Կատարելագործել տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման համակարգը և մեխանիզմները/ընթացակարգերը:	Մշակել միասնական տեղեկատվական տվյալների էլեկտրոնային բազա, որը հասանելի կլինի բոլոր ստորաբաժանումներին և ուսանողներին:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՀԼԿ բաժին, բուհի ստորաբաժանումներ:	Յուրաքանչյուր ստորաբաժանում հնարավորություն կունենա բացահայտել խնդիրները, թերությունները և դրանք վերացնել:	ՀԼԿ բաժնի պատասխանատու, ստորաբաժանումների ղեկավարներ:	Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2020թ. ուս. տարի	ԳՊՀ գործունեությանը վերաբերող տվյալների հավաքագրման, պահպանման և կիրառման հաստատված կարգի առկայություն:
16. Հստակեցնել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:	Համալսարանի նախահաշվի ծախսային և եկամտային հոդվածները համապատասխանեցնել և ներդաշնակեցնել ռազմավարական գերակա ուղղությունների հետ:	<i>Պարբերաբար իրականացվում է:</i>	ԳԽ, հաշվապահություն:	Առավել արդյունավետ և իրատեսորեն իրականացնել ՌԾ-ի նպատակները:	Ռեկտոր, գլխավոր հաշվապահ:	Մեկնարկ՝ 2018թ., ավարտ՝ 2020թ. ուս. տարի	Ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականություն : Ռազմավարական գերակայության ցուցիչներ:

<p>17.Մշակել համալսարանի էթիկայի կանոնակարգ, որը կհամապատասխանի համալսարանի առաքելությանը:</p>	<p>Մշակել համալսարանի ներքին շահակիցների էթիկայի կանոնակարգ, որը համահունչ է համալսարանի առաքելությանը:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ԳԽ, ԳԽ-ին կից հանձնաժողովներ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժին:</p>	<p>Ներքին շահակիցների էթիկայի կանոնագրքի կազմում և հաստատում:</p>	<p>Ռեկտոր, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի ղեկավար:</p>	<p>2018թ. դեկտեմբեր</p>	<p>ԳՊՀ գործող էթիկայի կանոնակարգի առկայություն, որը հասանելի է բոլորին:</p>
<p>18.Ստեղծել ռիսկերի կառավարման համակարգ:</p>	<p>Մշակել և կիրառել ռիսկերի իրականացման կառավարման համակարգ:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ԳԽ</p>	<p>Կազմել և հաստատել ՌԾ-ի իրականացման ռիսկերի կառավարման կարգ:</p>	<p>Ռեկտոր:</p>	<p>2019թ. նոյեմբեր:</p>	<p>Ռիսկերի կառավարման մեխանիզմների առկայություն:</p>

ՉԱՓԱՆԻՇ 3.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԽՆԴԻՒ ԸՆԿԱԼՈՒՄԸ

ԳՊՀ-ում գործող ՄԿԾ-ները համահունչ են բուհի առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Դրանցում նկարագրված են որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքները: ՄԿԾ-ները պարբերաբար թարմացվում են, քննարկվում ՈՒՎ-ում, թողարկող ամբիոններում:

ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Բուհում դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում դասախոսակենտրոն են: Անհրաժեշտ են կոնկրետ քայլեր դրանք ուսանողակենտրոն դարձնելու համար: Կիրառվող գնահատման մեթոդները ոչ միշտ են համադրելի արդյունքներին, ինչը թույլ չի տալիս չափել ձեռք բերված վերջնարդյունքները: ԳՊՀ-ն դեռևս պետք է երաշխավորի, որ բոլոր կրթական ծրագրերի մակարդակներում կան կիրառվող մեխանիզմներ:

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքներ իզնահատմանցուցիչներ
19. Մշակել և լրամշակել մասնագիտության կրթական ծրագրերն աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ ապահովելով ԳՊՀ-ի արտաքին շահակիցների առավել լայն ներգրավվածությունն այս գործընթացներում:	1. Տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների պարբերաբար վերհանում:	Իրականացման փուլում է:	1.Մասնագիտական ամբիոններ, 2.ՈՒՎ, 3. ԿՈԱ և ՈՒԿԱ քաժին:	Տարածաշրջանում պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկ:	1.ամբիոնի վարիչներ, 2. ՈՒՎ պետ, 3. ԿՈԱ և ՈՒԿԱ- քաժնի ղեկավար:	Մեկնարկ 2018թ. 1-ին եռամսյակ:	Տարածաշրջանի գործատուների հետ աշխատանքային հանդիպումների արձանագրություններ:
	2. Գործող ՄԿԾ-ների վերամշակում հնարավորինս համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին և տարածաշրջանում պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների ՄԿԾ-ների մշակում:	Պլանավորման փուլում է:	ՈՒՎ, Ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոններ, ԿՈԱ և ՈՒԿԱ քաժին:	Վերամշակված և լրամշակված ՄԿԾ-ներ:	Ռեկտոր, ՈՒՎ պետ, ֆակուլտետներ ի ղեկաններ, ամբիոնի վարիչներ:	Մեկնարկ 2018թ.-ի 1-ին եռամսյակ:	Դիմորդների հոսքի ավելացում:
	3. ԳՀՊ-ի արտաքին շահակիցների հետ պարբերաբար	Պլանավորման փուլում է:	ՈՒՎ, ԿՈԱ և ՈՒԿԱ-քաժին, ֆակուլտետներ,	Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին	ՈՒՎ պետ, ԿՈԱ և ՈՒԿԱ-քաժնի ՈՒԿԱ	2018թ.-ի 1ին եռամսյակ	Արտաքին շահակիցների դրական

	կազմակերպել քննարկումներ ՄԿԾ-ների մշակման և վերամշակման նպատակով:		մասնագիտական ամբիոններ:	հնարավորինս հանմահունչ ՄԿԾ-ներ:	մասնագետ ֆակուլտետներ ի դեկաններ, ամբիոնի վարիչներ:	ից- 4-րդ եռամսյակ:	Եզրակացություններ:
20. ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ հստակ ձևակերպել ԳՊՀ ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ ապահովելով դրանց չափելիությունը և դրանց հիման վրա ընտրել գնահատման մեթոդները:	ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի նկարագրիչներին համահունչ ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպման նպատակով աշխատանքային սեմինարների, խորհրդատվական հանդիպումների կազմակերպում:	<i>Պլանավորման փուլում է:</i>	Մասնագիտական ամբիոններ:	ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան ՄԿԾ-ներ:	1. ՈԻՎ պետ, 2. մասնագիտական ամբիոնի վարիչներ, 3. ԿՈԱ և ՈԻԿԱ Բաժնի ղեկավար:	2018թ.-ի 2-րդ եռամսյակ ից-2019թ. 1-ին եռամսյակ:	Համապատասխանության ստուգման ցուցիչներ, ՄԿԾ-ների՝ ՈԱՇ-ին համապատասխանության վերլուծություններ:
21. Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն, իրականացնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների պարբերական արդիականացում և համապատասխանեցում ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ՝ ապահովելով	1. Մշակել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ընթացակարգ	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՈԻՎ, ֆակուլտետներ, ամբիոններ, ՈԻԽ, ՈԻԳԸ:	Գործող համապատասխան քաղաքականություն:	ՈԻՎ պետ, դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՈԻԽ և ՈԻԳԸ նախագահներ:	2018թ.-ի 2-րդ եռամսյակ ից- 4-րդ եռամսյակ:	Ներքին շահակիցների կողմից դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության բավարարվածություն:
	2. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների պարբերաբար վերանայում, հիմքում	<i>Պլանավորման և իրականացման փուլում է:</i>	ՈԻՎ, ֆակուլտետներ, ամբիոններ, ՈԻԽ	Ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխան դասավանդման,	ՈԻՎ պետ, դեկաններ, ամբիոնի վարիչներ, ՈԻԽ նախագահ:	2018թ.-ի 1-ին եռամսյակ ից- 4-րդ եռամսյակ:	Ներքին շահակիցների և փորձագետների դրական արձագանք:

<p>ուսանողակենտրոն ուսուցման մոտեցման արմատավորումը:</p>	<p>միշտ ունենալով ուսումնառության ակնկալվող արդյունքները:</p>			<p>ուսումնառության ն և գնահատման մեթոդներ:</p>			
<p>22. Իրականացնել ակադեմիական ազնվության ապահովման գործող մեխանիզմների արդյունավետության գնահատում, աշխատանքներ տանել վերջիններիս բարելավման, նորերի մշակման, ուսանողության շրջանում իրազեկվածության բարձրացման շուրջ:</p>	<p>Ֆակուլտետներում և ամբիոններում, ինչպես նաև բոլոր կուրսերում և խմբերում կազմակերպել սեմինարներ և խորհրդատվական հանդիպումներ՝ իրազեկելու և քննարկելու ակադեմիական ազնվության ապահովման գործող մեխանիզմներ, անհարժեշտության դեպքում ավելի գործուն դարձնելու համար վերամշակել կամ մշակել նոր կարգեր:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Համապատասխան հանձնաժողով, ֆակուլտետներ, ամբիոններ, ՈՒԳԸ, ՈՒԽ:</p>	<p>Մշակված, վերամշակված և փորձարկված մեխանիզմներ, ուսանողության շրջանում այդ մեխանիզմների իրազեկության բարձրացում, ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացում:</p>	<p>Համապատասխան հանձնաժողովի անդամներ, դեկաններ, ամբիոնի վարիչներ:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ.-ի 1-ին կիսամյակ:</p>	<p>Ուսանողների բավարարվածության լրամշակված կարգերից, ավարտական աշխատանքների, մասնագիտական թեզերի արտաքին դրական գնահատականներ:</p>
<p>23. Վերամշակել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման քաղաքականությունն ու համակարգը՝ փոխկապակցելով ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ և իրազեկելով ներքին բոլոր շահակիցներին:</p>	<p>1. Ամբիոններում, ՈՒՎ-ում կազմակերպել քննարկումներ վերամշակելու կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման քաղաքականությունը՝ փոխկապակցելով ուսումնառության</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ՈՒՎ, ֆակուլտետներ, ամբիոններ, ՈՒԽ, ՈՒԳԸ:</p>	<p>Ակնկալվող արդյունքների հետ փոխկապակցված կրեդիտների հստակ բաշխումով ՄԿԾ-ներ:</p>	<p>ՈՒՎ պետ, ամբիոնի վարիչներ:</p>	<p>2018թ.-ի 2-րդ եռամսյակից- 4-րդ եռամսյակ:</p>	<p>Ներքին շահակիցների բավարարվածությունը կրեդիտների բաշխման մեխանիզմներից:</p>

	ակնկալվող արդյունքների հետ						
	2. Կրեդիտների հաշվարկման բաշխման և կուտակման կարգը տեղադրել բուհի կայքում, ֆակուլտետներում և ՈՒԽ-ում: կազմակերպել սեմինարներ՝ իրազեկելու կրեդիտների հաշվառման, բաշխման և կուտակման մեխանիզմների հետ:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՈՒՎ, ԿՈԱ և ՈՒԿԱ-բաժին, ղեկաններ, ՀԿԼ բաժին ,ամբիոններ, ՈՒԽ և ՈՒԳԸ:	Ներքին շահակիցների շրջանում հարցումների զգալի մասի դրական պատասխան կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման մեխանիզմների իմացության մասին:	ՈՒՎ պետ, ԿՈԱ և ՈՒԿԱ-բաժնի ղեկավար, ղեկաններ, ՀԿԼ բաժնի պատասխանատու, ամբիոնների վարիչներ, , ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ, ուս. խորհրդատուներ :	Մեկնարկ՝ 2018թ.-ի 4-րդ եռամսյակ:	Ներքին շահակիցների շրջանում հարցումների զգալի մասի դրական պատասխան:
24. ՄԿԾ-ներում ավելացնել գործնական բաղադրիչների ժամաքանակը՝ դրանք դարձնելով համապատասխան առարկայի դասախոսությունների ժամաքանակից ոչ պակաս:	Վերանայել ՄԿԾ-ները, մասնավորապես ուսումնական պլաններում ավելացնել գործնական բաղադրիչների ժամաքանակը այն առարկաների գծով, որտեղ դասախոսություններին տրված ժամաքանակը ավելին է եղել:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՈՒՎ, մասնագիտական ամբիոններ:	Վերամշակված ՄԿԾ-ներ, որոնց ուս պլաններում առարկաների գործնական բաղադրիչների ժամաքանակն ավելին է դասախոսությունների ժամաքանակից:	ՈՒՎ պետ, ամբիոնների վարիչներ:	2018թ.-ի 1-ին եռամսյակից- 4-րդ եռամսյակ:	Գործընթացների արձանագրություններ:
25.Բազմազանեցնել պրակտիկաների ձևերը՝ մշակելով համապատասխան ընթացակարգեր, վերահսկման և գնահատման դրույթներ:	1. Ֆակուլտետների խորհուրդներում, մասնագիտական ամբիոններում, ՈւԽ, ՈՒՎ համապատասխան ներկայացուցիչների	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՈՒՎ, Ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոններ:	ՄԿԾ-ներում պրակտիկայի ձևերի բազմազանեցում:	ՈՒՎ պետ, ՈՒՎ պրակտիկայի գծով պատասխանատու:	2018թ.-ի 2-րդ եռամսյակից- 4-րդ եռամսյակ:	Ներքին շահակիցների բավարարվածությունը պրակտիկայի ձևերից:

	<p>հետ կազմակերպել քննարկումներ պրակտիկաների ձևերը, աշխատաշուկայի առկա իրավիճակից կախված, հնարավորինս բազմազանեցնելու համար:</p>						
	<p>2. Ստեղծել հանձնաժողով՝ մշակել ու կիրառվող և նոր ծրագրված պրակտիկայի ձևերի համապատասխան ընթացակարգ, վերահսկման և գնահատման դրույթներ:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ՈԻՎ, Մասնագիտական ամբիոններ, ՈԻԽ և ՈԻԳԸ:</p>	<p>Պրակտիկաների բոլոր ձևերի համար հստակ ընթացակարգեր:</p>	<p>ՈԻՎ, ամբիոնների վարիչներ:</p>	<p>2018.թ.-ի 3-րդ եռամսյակից 4-րդ եռամսյակ:</p>	<p>Ներքին շահակիցների բավարարվածությունը պրակտիկայի ընթացակարգերից, վերահսկման և գնահատման դրույթներից:</p>
<p>26. Թարմացնել և արդիականացնել առարկայական նկարագրերի գրականության ցանկերն՝ աշխատելով դրանցում ներառել նաև անզլալեզու գրականություն:</p>	<p>Բոլոր ամբիոններում կազմակերպել հատուկ նիստեր՝ քննարկելով առարկայական նկարագրերի գրականության ցանկերի արդիականացման հարցը՝ հնարավորության դեպքում ներառելով անզլեթեն լեզվով գրականություն:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Մասնագիտական ամբիոններ:</p>	<p>Թարմացված և հնարավորինս ժամանակակից գրականությամբ հագեցած առարկայական նկարագրեր:</p>	<p>ՈԻՎ, ամբիոնների վարիչներ:</p>	<p>2018.թ. 2-րդ եռամսյակ:</p>	<p>Թարմացված և արդիականացված առարկայական նկարագրերի առկայություն:</p>
<p>27. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր</p>	<p>1.ՄԿԾ-ների պատասխանատուների հետ կազմակերպել</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>ՈԻՎ, մասնագիտական ամբիոններ:</p>	<p>Բենչմարքինգի հասկացության, մեթոդաբանությ</p>	<p>ՈԻՎ պետ, ամբիոնների վարիչներ:</p>	<p>2018թ. 2-րդ եռամսյակ:</p>	<p>Ներքին շահակիցների շրջանում</p>

մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:	աշխատանքային սեմինարներ, խորհրդատվական հանդիպումներ՝ համապատասխան փորձագետների ներգրավմամբ:			ան կիրառման մեխանիզմի իրագեկության բարձրացում համալսարանի վարչական, պրոֆեսորադաս ախոսական և ուսանողության շրջանում:			բենչմարքինգի դերի կարևորության բարձրացում:
	2.Ստեղծել աշխատանքային խումբ բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանության և արդյունքների կիրառման մեխանիզմներ մշակելու համար:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՌԻՎ, մասնագիտական ամբիոններ, ՌԻԽ և ՌԻԳԸ:	Միջազգային նորմերի համապատասխան վերամշակված ՄԿԾ-ներ:	Ռեկտոր, ՌԻՎ պետ, ամբիոնների վարիչներ:	2018թ. 3-րդ եռամսյակ ից-4-րդ եռամսյակ:	Բենչմարքինգի իրականացման կոնկրետ մեթոդաբանություն և ընթացակարգեր:
28. Ուսումնական պլանները դարձնել առավել ճկուն:	Ներբուհական գործող ՄԿԾ-ներում համեմատել հայաստանյան և օտարերկրյա բուհերի ՄԿԾ-ների հետ, հնարավորինս վերանայել առարկայական և առարկաներին տրվող կրեդիտների տարբերությունը:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՌԻՎ, մասնագիտական ամբիոններ, ՌԻԽ և ՌԻԳԸ:	Հնարավորինս համադրելի և ճկուն ուսումնական պլաններ:	ՌԻՎ պետ, ամբիոնների վարիչներ:	2018թ.3-րդ եռամսյակ:	Վերանայված ուսումնական պլաններ, ՌԻՎ-ի համապատասխան քննարկումների արձանագրություններ:
29. Մշակել ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստող մեխանիզմներ:	Վերամշակված ՄԿԾ-ների հաստատում և ներդրում ուսումնական գործընթացում:	<i>Պլանավորման փուլում է:</i>	ՌԻՎ, ԿՈԱ և ՌԻԿԱ-բաժին, ՄՀԾ բաժին, ՌԻԽ և ՌԻԳԸ:	Շարժունակության և պատրաստ ուսանողներ և դասախոսներ:	Ռեկտոր, ՌԻՎ պետ, ՄՀԾ բաժնի պատասխանա	2018 թ. 4-րդ եռամսյակ ից սկսած:	Դասախոսների և ուսանողների շարժունության աճ:

	Դասախոսների և ուսանողների համար կազմակերպել վերապատրաստումներ (մասնավորապես օտար լեզուներ)				տու:		
30. Կիրառել ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմները ըստ ՊԻԳԲ շրջափուլի՝ ներքին և արտաքին շահակիցների անմիջական մասնակցությամբ:	ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի ստեղծում: Կատարել համեմատություն այլ բուհերի նմանատիպ ՄԿԾ-ների հետ, ելնելով արտաքին և ներքին շահակիցների կարիքներից:	<i>Պլանավորման փուլում է:</i>	Ռեկտոր, պրոռեկտոր, ՈԻՎ, մասնագիտական ամբիոններ:	Ստեղծված աշխատանքային խմբի գործունեության ժամանակացույց: Համադրելի վերլուծություն, հավաքագրված տվյալների բազա, բարելավված ՄԿԾ-ների ներդրում բուհում:	ՈԻՎ պետ:	Ավարտ՝ 2019թ. փետրվար:	Ստեղծված աշխատանքային խմբի գործունեության ժամանակացույց: Ժամանակացույցի հաստատում: Համադրելի արդյունքների մասին արձանագրություն ներ: Հետադարձ կապ գործատուներից:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԽՆԴՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

ԳՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման գեկույցում ներառված «Ուսանողները» բաժնում առկա էին մի շարք բացթողումներ, որոնք հնարավորություն չէին տալիս լիարժեքորեն վերհանել ուսանողների կրթական կարիքները, լիարժեքորեն ապահովել ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունը:

ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Փորձագիտական այցից հետո վեր են հանվել առկա բացթողումները, որոնց լրացման համար անհրաժեշտ են թարմացնել ուսանողների հավաքագրման մեխանիզմները, կատարել բարելավումներ՝ ընտրելով ավելի արդյունավետ մեխանիզմներ: Ցածր առաջադիմությամբ, ինչպես նաև հեռակա համակարգի ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ տարվող աշխատանքները թույլ են և չհամակարգված: Կարիերայի աջակցման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը խիստ ցածր է, որը պայմանավորված է կենտրոնի մարդկային ռեսուրսների սղությամբ: Պետք է պատշաճ ուշադրություն դարձնել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատմանը և որակի ապահովմանը:

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիմ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
31. Մշակել ուսանողների հավաքագրման, նրանց տրամադրվող խորհրդատվությունների ու մատուցվող այլ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:	Ուսանողների հավաքագրման և խորհրդատվությունների իրականացման ժամանակահատվածի ճիշտ ընտրություն, ինչպես նաև ուսանողների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվության տարածում:	Մշակման փուլում է:	Ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոններ, ՀԼԿ բաժին:	Ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմների կիրառություն:	Դեկաններ, մասնագիտական ամբիոնների վարիչներ, ՀԼԿ բաժնի պատասխանատու:	Մեկնարկ՝ 2018թ. դեկտեմբեր:	Դիմորդների և ուսանողների թվի աճ:

32. Մշակել վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույցեր՝ ապահովելով վերջինիս հասանելիությունն ուսանողներին:	Այլ բուհերի փորձի ուսումնասիրություն: Ժամանակացույցերի կազմում:	Պլանավորման փուլում է:	Աշխատակազմի կառավարման բաժին,	Ժամանակացույցերի առկայություն:	ԱԿ բաժնի ղեկավար:	Մեկնարկ՝ 2018թ. հոկտեմբեր:	Ժամանակացույցերի ապահովում
33. Տրամադրել ուսանողներին ուղղորդում և օժանդակություն՝ կամ ընտրական դասընթացների ընտրության հարցում:	Մշակել ընտրական դասընթացների ընտրության կարգ:	Պլանավորման փուլում է:	Ֆակուլտետներ, Մասնագիտական ամբիոններ, ԿՈԱ և ՈւԿԱ բաժին, Ուսումնական խորհրդատուներ, ՈԻԽ և ՈԻԳԸ:	Ընտրովի դասընթացների կարգի առկայություն:	ՈԻՎ պետ, Մասնագիտական ամբիոնների վարիչներ, Դեկաններ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի մասնագետներ:	Մեկնարկ՝ 2018թ. դեկտեմբեր	Ընտրովի դասընթացների ընտրության գործող կարգ:
34. Կատարելագործել առկա և հեռակա ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմներն՝ ապահովելով դրանց պարբերականությունը:	Մշակել և կիրառել ուսանողների կարիքների վերհանման ընթացակարգեր, բարելավել մեխանիզմները:	Մշակման փուլում է:	Ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոններ, ՈԻԽ և ՈԻԳԸ:	Ուսանողների կրթական կարիքների վերհանման ընթացակարգեր:	Ֆակուլտետների դեկաններ, մասնագիտական ամբիոնների վարիչներ, ուս. խորհրդատուներ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի մասնագետներ:	Մեկնարկ՝ 2019թ. փետրվար	Վերհանված խնդիրների լուծմանն ու բարելավմանն ուղղված քայլեր:

<p>35. Մշակել հեռակա համակարգի ուսանողներին հետազոտական աշխատանքներում և իրենց իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմիններում ներգրավվածության բարձրացման մեխանիզմներ:</p>	<p>Կատարել փոփոխություններ գործող փաստաթղթերում:</p>	<p>Պլանավորման փուլում է:</p>	<p>Ֆակուլտետներ, Մասնագիտական ամբիոններ, Գիտական խորհուրդ, ՈՒԳԸ և ՈՒԽ:</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածություն և մասնակցություն գիտաժողովներին և համապատասխան մարմինների աշխատանքներին:</p>	<p>Ֆակուլտետների ղեկաններ, Մասնագիտական ամբիոնների վարիչներ, ՈՒԳԸ և ՈՒԽ նախագահներ:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների մասնակցության աճ և հրատարակված հոդվածներ, ինչպես նաև համապատասխան մարմիններում ներգրավվածություն:</p>
<p>36. Տրամադրել ուսանողների կարիերային նպաստող որակյալ ծառայություններ, իրականացնել տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների, շրջանավարտների զբաղվածության և ուսումնասիրություն, սերտացնել համալսարան-գործատու և հետազոտություն-ուսումնառություն կապերը:</p>	<p>Ուսանողների կարիերայի աջակցման համար տեղեկատվական նյութերի մշակում և տարածում, ինչպես նաև ուսանողների, շրջանավարտների կարիերայի աջակցմանը նպաստող գործողությունների իրականացում:</p>	<p>Իրականացման փուլում է:</p>	<p>Ներքին և արտաքին շահակիցներ:</p>	<p>Ձեռնարկներ, Տեղեկատվական նյութեր, տեղեկատվություն կայքէջում, կլոր սեղաններ, սոց. հարցումներ:</p>	<p>ԿՈԱ և ՈւԿԱ բաժնի կարերիայի պատասխանատու:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ. նոյեմբեր:</p>	<p>Ուսանողների կարծիքների վերլուծության արդյունքներ, տեղեկատվության մատչելիություն և հասանելիություն :</p>

<p>37. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ստեղծել ուսումնառության անհրաժեշտ միջավայր, տրամադրել անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն:</p>	<p>Հատուկ կարիքներով ուսանողների համար ստեղծել համապատասխան կրթական հնարավորություններ:</p>	<p>Իրականացման փուլում է:</p>	<p>ԳՊՀ բյուջե, ASPIRE ծրագրի իրականացման արդյունքում ձեռք բերված միջոցներ:</p>	<p>Ուսումնառողների համար կրթական ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում, դասախոսների վերապատրաստում:</p>	<p>Ավագ ճարտարագետ, մասնագիտական ամբիոնների վարիչներ:</p>	<p>Կախված է համալսարանի ֆինանսական հնարավորություններից:</p>	<p>Շահակիցների արձագանքներ:</p>
<p>38. Կանոնակարգել լրացուցիչ պարապմունքների կազմակերպումն, իրականացնել կամ բջող դասընթացներ ուսանողների կարիքների վերհանման ու ախտորոշիչ գնահատման հիման վրա՝ ստեղծելով և ներքին շահակիցներին տրամադրելով դրանց հստակ ժամանակացույցեր:</p>	<p>Առանձին բաղադրիչների միջև կապի ստեղծում</p>	<p>Պլանավորման փուլում է:</p>	<p>Բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:</p>	<p>Հասանելի էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ, համակարգված վերլուծության արդյունքներ:</p>	<p>Ամբիոնների վարիչներ, դեկաններ, ՈւՎ պետ:</p>	<p>Մեկնարկ՝ 2018թ. հոկտեմբեր</p>	<p>Չափելի և համադրելի ցուցանիշներ, որոնց միջոցով հնարավոր լինի վեր հանել բուհի թույլ և ուժեղ կողմերը:</p>

ՉԱՓԱՆԻՇ V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՄՈՒՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱԵԼՈՒ ԵՎ ՄԿԾ-ՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԻՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄՈՎ

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիվ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
<p>39. Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգը դարձնել ավելի հասանելի մրցույթի հնարավոր մասնակիցների համար և գործնականում առավել ակտիվ կիրառել մրցութային կարգը:</p>	<p>Լրամշակել և արդիականացնել ՊԴ կազմի ընտրության ընթացակարգը և առավել հասանելի դարձնել հնարավոր մասնակիցների համար:</p>	<p>Ընթացիկ փուլ</p>	<p>Պրոռեկտոր, ԱԿԲ, ֆակուլտետներ, ամբիոններ:</p>	<p>Որակյալ ՊԴ կազմ:</p>	<p>Պրոռեկտոր, ԱԿ Բաժնի ղեկավար, ֆակ. ղեկաններ, ամբիոնների վարիչներ:</p>	<p>Ավարտ՝ 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Մրցութային կարգի ակտիվ կիրառություն, ընտրության թափանցիկություն:</p>
<p>40. Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ՄԿԾ-ների առանձնահատկությունները:</p>	<p>Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար մշակել ՊԴ կազմի մասագիտական որակներին ներկայացվող պահանջներ և հատուկ ցուցիչներ, լրամշակել և կիրառել դասախոսների ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերը:</p>	<p>Ընթացիկ փուլ</p>	<p>Աշխատանքային խումբ, ԱԿԲ, ֆակուլտետներ, մասնագիտական ամբիոններ և ԿՈԱ և ՈԻԿԱ Բաժին, ՈԻՎ:</p>	<p>ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ՊԴ կազմ:</p>	<p>Պրոռեկտոր, ԱԿ Բաժնի ղեկավար, ՈԻՎ պետ, ԿՈԱ և ՈԻԿԱ Բաժնի ղեկավար:</p>	<p>Ավարտ՝ 2019թ. սեպտեմբեր</p>	<p>Գնահատման արդյունքների վերլուծություն, ըստ ՄԿԾ-ների պահանջների՝ դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերլուծություն:</p>

<p>41. Ներդնել դասախոսական կազմի կարիքների վերհանման արդյունավետ համակարգ, վերանայել դասախոսների աշխատանքների որակի և արդյունավետության բարձրացման նպատակով անցկացվող հարցումների հարցաշարերը և բացատրական աշխատանք տանել հարցվողների շրջանում:</p>	<p>Մշակել համակարգ դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության գնահատման նպատակով, նորացնել հարցաշարերը, բացատրական աշխատանք տանել հարցվողների շրջանում:</p>	<p>Ընթացիկ փուլ</p>	<p>Աշխատանքային խումբ, ՈԻՎ, ԿՈԱ և ՈԻԿԱ բաժին, ԱԿԲ, ֆակուլտետներ, ամբիոններ:</p>	<p>ՊԴ կազմի աշխատանքի որակի արդյունավետության բարձրացում և գնահատում:</p>	<p>Աշխատանքային խմբի անդամներ, ՈԻՎ պետ, անձնակազմի հաշվառման պատասխանատու, ԿՈԱ բաժնի ղեկավար, ֆակ. ղեկաններ, ամբիոնների վարիչներ:</p>	<p>Ավարտ՝ 2018թ. դեկտեմբեր</p>	<p>Գնահատման արդյունքների վերլուծություն:</p>
<p>42. Վերհանված կարիքների հիման վրա իրականացնել դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Պարբերաբար իրականացնել դասախոսական կազմի ինչպես մեթոդական, այնպես էլ մասնագիտական վերապատրաստումներ: Բարելավել առկա վերապատրաստման դասընթացների որակն ու արդյունավետությունը:</p>	<p>Լրամշակել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագիր և կանոնակարգ, զարգացնել համագործակցությունը հայաստանյան, արտասահմանյան բուհերի և գիտական կազմակերպությունների հետ մասնագիտական վերապատրաստումների նպատակով:</p>	<p>Ավարտական փուլ</p>	<p>ԿՈԱ և ՈԻԿԱ բաժին, ԱԿԶ բաժին, մասնագիտական ամբիոններ, արտասահմանյան և հայաստանյան բուհեր, գիտական կազմակերպություններ:</p>	<p>Մասնագիտական վերապատրաստումներ անցած ՊԴ կազմ, ՊԴ կազմի մասնագիտական աճի ապահովում</p>	<p>ԿՈԱ և ՈԻԿԱ բաժնի ղեկավար, ԱԿԶ բաժնի վարիչ, մասնագիտական ամբիոնների վարիչներ:</p>	<p>Ավարտ՝ 2019թ. սեպտեմբեր</p>	<p>ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստումների վերաբերյալ վիճակագրություն:</p>
<p>43. Գործարկել պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի անձնակազմի խրախուսման և առաջխաղացման հստակ և</p>	<p>Մշակել ՊԴ և ՈԻՕ կազմի խրախուսման և առաջխաղացման, աշխատանքի վարձատրման</p>	<p>Ընթացիկ փուլ</p>	<p>Աշխատանքային խումբ, հաշվապահություն, ԱԿ բաժին:</p>	<p>ՊԴ և ՈԻՕ կազմի մասնագիտական որակների և աշխատանքի արդյունավետության բարձրացում:</p>	<p>Աշխատանքային խմբի անդամներ, գլխավոր հաշվապահ, ԱԿ բաժնի ղեկավար:</p>	<p>Ավարտ՝ 2018թ. դեկտեմբեր</p>	<p>ՊԴ և ՈԻՕ կազմի բավարարվածություն գործող համակարգից:</p>

կանոնակարգված մեխանիզմներ, սահմանել տարբերակված աշխատավարձ:	տարբերակման մեխանիզմներ:						
44. Պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության նպատակով մշակել գիտամանկավարժական կադրերի պատրաստման հստակ քաղաքականություն, օժանդակություն ցուցաբերել սկսնակ դասախոսներին:	Մշակել երիտասարդ կադրերի ընտրության քաղաքականություն՝ սկսած մագիստրատուրայի կրթական աստիճանից, ստեղծել երիտասարդների առաջատար կրթական փորձի փոխանցման համակարգ և մեխանիզմներ:	Պլանավորման փուլ	Պրոռեկտոր, ԱԿ բաժին, մասնագիտական ամբիոններ:	Երիտասարդ կադրերի ներգրավվածության ավելացում, սերնդափոխության առկայություն:	Պրոռեկտոր, ԱԿ բաժնի ղեկավար, մասնագիտական ամբիոնների վարիչներ:	Ավարտ՝ 2019թ. հունվար	ՊԴ կազմի տարիքային ցուցանիշի բարելավում (վիճակագրական վերլուծություն), երիտասարդ դասախոսական կազմի տեսակարար կշռի դինամիկայի վերլուծական ցուցիչներ:
45. Մշակել ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականություն՝ կանոնակարգելով վերջիններիս գործառույթները պաշտոնի անձնագրերով:	Մշակել ՈԻՕ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգ՝ կանոնակարգելով վերջիններիս գործառույթները պաշտոնի անձնագրերով:	Ընթացիկ փուլ	ԱԿ բաժին, ՈԻՎ, Ֆակուլտետներ, ամբիոններ:	ՈԻՕ կազմի ընտրության քաղաքականություն և կանոնակարգ:	ԱԿ բաժնի ղեկավար, ՈԻՎ պետ, ֆակուլտետի ղեկաններ, ամբիոնների վարիչներ:	Ավարտ՝ 2018թ. դեկտեմբեր	ՈԻՕ կազմի աշխատանքի արդյունավետության վերլուծություն:
46. Իրականացնել մարդկային ռեսուրսների պլանավորում և մշակել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն:	1. Մշակել մարդկային ռեսուրսների պլանավորման ընթացակարգ,	Պլանավորման փուլ	Ռեկտոր, պրոռեկտոր, ԱԿ բաժին, մասնագիտական ամբիոններ:	1. Մարդկային ռեսուրսների պլանավորում, 2. Մարդկային ռեսուրսների	Ռեկտոր, պրոռեկտոր, ԱԿ բաժնի ղեկավար, մասնագիտական	Ավարտ՝ 2019թ. հունվար	

	2. Մշակել ռեսուրսների կառավարման քաղաքականություն :			կառավարման քաղաքականությ ուն:	ամբիոնների վարիչներ:		
--	---	--	--	-------------------------------------	-------------------------	--	--

ԽՆԴԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Գործիսի պետական համալսարանը հետազոտության ոլորտում իր հավակնություններն ընդհանուր կերպով ամրագրել է ԳՊՀ-ի 2011-2016թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգում, որի համաձայն հետազոտության ոլորտը համարվում է բուհի գործունեության գերակայություններից մեկը: Ռազմավարական հայեցակարգով նախատեսված նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար համալսարանը տրամադրել է որոշակի ռեսուրսներ, իրականացրել տարաբնույթ միջոցառումներ: Վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ և միջպետական ֆինանսավորմամբ համալսարանում իրականացվել են որոշ գիտական ծրագրեր, տարբեր ժամանակներում համալսարանում կազմակերպվել են ներբուհական, ինչպես նաև միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, հրատարակվել են գիտական բազմաթիվ հոդվածներ, ուսումնամեթոդական աշխատանքներ: ԳՊՀ-ն կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը: Այս ոլորտում բուհի ռազմավարական խնդիրն է՝ միջազգայնացնել համալսարանի գիտությունը, խթանել ստորաբաժանումների մասնակցությանը միջազգային ծրագրերին, նպաստել արտասահմանյան ֆոնդերի ներգրավմանը գիտական հետազոտությունների զարգացման գործում:

ԿԱՐԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Նշված խնդիրների առնչությամբ իրականացված կարիքների հետազոտությամբ բացահայտվել է.

- Հստակ սահմանված ու համակարգված չեն բուհի հետազոտական գերակայություններն ու հիմնական ուղղությունները, հետաքրքրություններն ու հավակնությունները,
- Առկա չեն գիտահետազոտական գործունեությունը կանոնակարգող քաղաքականությունները,
- ԳՊՀ-ում գիտական հետազոտությունները հիմնականում իրականացվում են միայն անհատական նախաձեռնությունների ձևով, կատարվող հետազոտությունները ՄՈՒՀ-ում թիրախավորված և պլանավորված չեն,
- Բացակայում են միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների ու դասավանդողների ներգրավվածության համակարգման քաղաքականությունները և մեխանիզմները, ուսումնառության գործընթացում հետազոտական գործունեության և արդյունքների ներդրման հստակ մեխանիզմները,
- Աննշան են ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակումները:

Գործողություն	Քայլեր	Ընթացիկ վիճակը	Ռեսուրս	Վերջնարդյունք	Պատասխանատու թիվ	Ժամանակահատված	Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ
47. Մշակել և սահմանել ԳՊՀ-ի հետազոտության ոլորտի հստակ սահմանված գերակայություններն ու առաջնահերթությունները՝ շեշտադրելով տարածաշրջանի կարիքները և կարևորելով հետազոտության արդյունքների հնարավոր ապրանքայնացումը:	1. Ունենալ գիտության հարցերով պատասխանատու կամ համակարգող:	<i>Պլանավորման փուլում է:</i>	Ռեկտոր, ԳԽ:	Բուհի հետազոտական գերակայություններին և հիմնական ուղղությունների համակարգում	Ռեկտոր, գիտ. քարտուղար:	2019թ. 1-ին եռամսյակ:	Համակարգված գիտակազմակերպական և հետազոտական գործունեություն:
	2. Հստակեցնել մասնագիտական ամբիոններում հետազոտական գործունեության ուղղությունները:	<i>Պլանավորման փուլում է:</i>	Մասնագիտական ամբիոններ:	Մասնագիտական ամբիոններում գիտական ուղղությունների զարգացում:	Մասնագիտական ամբիոնների վարիչներ, գիտ. քարտուղար:	Մեկնարկ՝ 2018թ. 4-րդ եռամսյակ Ավարտ՝ 2019թ. 2-րդ եռամսյակ	Տարածաշրջանի կարիքներից բխող հստակ սահմանված հետազոտական հետաքրքրություններ և առաջնահերթություններ:
48. Մշակել և կիրառել գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափագրող մեխանիզմներ և	1. Մտեղծել հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու առանձնացված փաստաթուղթ, որում շարադրված կլինեն կոնկրետ գործողություններ և պահանջվող ռեսուրսներ:	<i>Պլանավորման փուլում է:</i>	Գիտության հարցերով պատասխանատու, ԳԽ, մասնագիտական ամբիոններ:	Հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու առանձնացված փաստաթուղթ:	Գիտ. քարտուղար, մասնագիտական ամբիոնների վարիչներ:	2019թ. 2-րդ եռամսյակ	Հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու առանձնացված փաստաթղթի առկայություն:

<p>ցուցանիշներ:</p>	<p>2. Ստեղծել գիտահետազոտական աշխատանքի արդյունավետությունը չափելու գործիքներ և գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության ու արդիականության առաջընթացը չափելու մեխանիզմներ:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Գիտության հարցերով պատասխանատու, գիտական քարտուղար, համապատասխան մասնագետներ:</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքի արդյունավետությունը չափելու գործիքներ և գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության ու արդիականության առաջընթացը չափելու մեխանիզմներ:</p>	<p>Գիտ. քարտուղար:</p>	<p>2019թ. 3-րդ եռամսյակ:</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման հստակ սահմանված գործիքների, առաջընթացը չափագրող մեխանիզմների առկայություն:</p>
<p>49.Գիտահետազոտական ոլորտի համար իրականացնել ֆինանսական պլանավորում և հատկացնել բավարար միջոցներ՝ գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:</p>	<p>1. Իրականացնել գիտահետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերլուծություն՝ ըստ ամբիոնների հետազոտական ուղղությունների:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Մասնագիտական ամբիոններ:</p>	<p>Գիտահետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերաբերյալ տվյալներ:</p>	<p>Գիտ. քարտուղար, ամբիոնների վարիչներ:</p>	<p>2019թ. 3-րդ եռամսյակ:</p>	<p>Իրականացվող գիտահետազոտական աշխատանքների որակի, արդյունավետության և այդ աշխատանքներին հատկացվող ռեսուրսների բաշխվածության վերաբերյալ տվյալների առկայություն:</p>
<p>2. Համալսարանի բյուջեում գիտահետազոտական աշխատանքների</p>	<p><i>Իրականացման փուլում է:</i></p>	<p>Ռեկտոր, գիտական քարտուղար, ԳԽ-ին առընթեր</p>	<p>ԳՊՀ աշխատողներին գիտակազմակերպական և</p>	<p>Ռեկտոր, գիտ. քարտուղար, պատմության և իրավագիտության</p>	<p>2019թ. 1-ին եռամսյակ:</p>	<p>ԳՊՀ աշխատողներին գիտակազմակերպական և ուսումնամեթոդական</p>	

	<p>ֆինանսավորման համար սահմանել հատուկ հոդված, մեծացնել գիտությանը հատկացվող ֆինանսավորման ծավալները:</p>		<p>գործող կանոնադրական և կառուցվածքային փոփոխությունների համակարգման հանձնաժողով, հաշվապահություն:</p>	<p>ուսումնամեթոդական որոշ տեսակի աշխատանքների համար ֆինանսական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգ:</p>	<p>ամբիոնի վարիչ, ՌԻՎ պետ, հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, քիմիայի և կենսաբանության ամբիոնի վարիչ, գլխ. հաշվապահ:</p>		<p>որոշ տեսակի աշխատանքների համար ֆինանսական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգի առկայություն:</p>
	<p>3 . Ձեռնարկել քայլեր գիտահետազոտական գործունեության խրախուսման նպատակով համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացման ուղղությամբ:</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Ռեկտոր, ԳԽ, Հաշվապահություն:</p>	<p>Տարբեր աղբյուրների ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրեր:</p>	<p>Ռեկտոր, գիտ. քարտուղար, գլխ. հաշվապահ:</p>	<p>Մեկնարկը՝ 1919թ. հունվար Ավարտը՝ 1919թ. դեկտեմբեր</p>	<p>Բուհի կողմից իրականացվող գիտական ծրագրերի առկայություն:</p>
<p>50.Մշակել հետազոտական գործունեության կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր՝ ապահովելով</p>	<p>Մշակել համապատասխան պլան, որում սահմանված լինի երկարաժամկետ հատվածում գործողությունների</p>	<p><i>Պլանավորման փուլում է:</i></p>	<p>Ռեկտոր, գիտության հարցերով պատասխանատու, գիտ.քարտուղար մասնագիտական ամբիոններ:</p>	<p>Ունենալ արդյունավետության և ազդեցության տեսանկյունից հետազոտությունների ընթացքի և արդյունքների</p>	<p>Ռեկտոր, գիտ. քարտուղար, մասնագիտական ամբիոնների վարիչներ:</p>	<p>2019թ. 3-րդ եռամսյակ</p>	<p>Ամբիոններում առկա գիտական սեմինարների կազմակերպման համակարգ: Վերլուծված բոլոր ծրագրերի</p>

<p>ռազմավարական ծրագրում սահմանված գիտահետազոտական առաջնահերթությունների հետ փոխախկնական կապերը:</p>	<p>հաջորդականություն՝ ըստ ՌԾ-ի: Մշակել և գործառնության մեջ դնել երկարաժամկետ (5 տարի), միջնաժամկետ (3 տարի) և կարճաժամկետ (1-2 տարի) գիտական թեմատիկ ծրագրեր:</p>			<p>մշտադիտարկման մեխանիզմներ, խրախուսել ՊԴ կազմի գիտական հետաքրքրվածությունը:</p>			<p>արդյունքների արդյունավետության գնահատման արդյունքներ:</p>
